ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՀՅՈՒՍՏՈՆԻ (ԱՄՆ) ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՍ ՍՈՒՐԲ ԳԵՒՈՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՈՐ Ի ՀԻՍԹԸՆ, ԱՄՆ

1700-ամեայ մեր հոգեւոր օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ԱՄՆ հայոց արեւելեան թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանին, Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր դասին, վարչական պաշտօնեութեանը, բարեպաշտ բոլոր հաւատացեալներին եւ սրտաբուխ շնորհաւորում եկեղեցու հիմնադրման 20-րդ տարեդարձի առիթով:

Գոհունակ սրտով ուրախակից ենք Ձեզ, որ յոբելեանազարդ այս տարում հանդիսաւորապէս նշում էք Սուրբ Գեւորգ եկեղեցու հիմնադրման 20-րդ տարեդարձը:

Սիրելիներ. նոր հազարամեակը սկսում ենք քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելեանով, որ հոգեւոր վերազարթօնքի աստուածային հրաւէր է աշխարհասփիւռ մեր ժողովրդին: Այսօր կոչուած ենք 1700-ամեակի խորհրդով սրբելու մեր սրտերը եւ մէկտեղելու մեր ջանքերը, որպէսզի ազգային մեր կեանքն առաւել լցուի հաւատով ու սիրով, յոյսով ու լոյսով:

Եկեղեցին տունն է Աստուծոյ, որտեղ համահաւաք արժանանում ենք Տիրոջ տեսութեանը, հաղորդւում մեր սուրբ նախնեաց հետ, հաստատւում ազգային մեր արժէքների մէջ: Շնորհ ունեն բոլոր հայորդիք, ովքեր քսան տարիներ առաջ ԱՄՆ-ի Հիւսթըն քաղաքում Սուրբ Գեւորգ եկեղեցին հիմնելու տեսիլն ունեցան եւ դրա իրագործմանը ամենայն սիրով ու պատրաստակամութեամբ ներդրեցին հոգեւոր եւ նիւթական իրենց կարողութիւնները: Առ Աստուած նրանց անսակարկ հաւատի եւ առ հայրենի ժողովուրդը սիրոյ ու նուիրումի բարի արդիւնքն է, որ եկեղեցին հեռաւոր ԱՄՆ-ի Հիւսթըն քաղաքում Սուրբ Գեւորգի բարեխօսութեամբ շնորհաբաշխ իր դրոներն է բացել բարեպաշտ հաւատացեալների առջեւ՝ դառնալով հայորդեաց հոգեւոր ու ազգային համահաւաք կեանքը կազմակերպող սուրբ ու նուիրական օջախ:

Սիրելի հաւատացեալներ. Սուրբ Գեւորգ եկեղեցու հիմնադրման քսաներորդ տարեդարձի առիթով Հայրական Մեր պատգամն ու յորդորն է Ձեզ ամենքիդ, որ Դուք շարունակէք նոյն եռանդով, հայրենապաշտ նոյն ոգով ու եկեղեցանուէր գործերով օրաւուր զօրացնել ու ծաղկեցնել Ս. Գեւորգ եկեղեցին՝ ի պայծառութիւն

ԱՄՆ հայոց արեւելեան Տիրախնամ թեմի եւ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Բարձրեալն Աստուած հաստատուն պահի Սուրբ Գեւորգ եկեղեցին, սիրով ու միաբան՝ հաւատաւոր մեր ժողովրդին, եւ Իր օրհնութեան ներքոյ յարանորոգ յաջողութիւներ պարգեւի Ս. Գեւորգ եկեղեցու բոլոր նուիրեալների ու բարեպաշտ Մեր զաւակների ջանքերին ու ծրագրերին:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 19-ն Մեպտեմբերի
յամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 195